ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Դ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Պետական դուման Ռուսաստանյան առաջին հեղափոխության ծնունդն էր։ Հեղափոխությունը (1905—1907) նախապատրաստվել էր երկրի՝ XIX դ. վերջին տասնամյակների և XX դ. սկզբի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման ողջ ընթացքով։ Այն նշանավորեց սոցիալական խոր ցնցումների ու հեղափոխական պայքարի ժամանակաշրջանի սկիզբը։

Ռուսաստանյան առաջին հեղափոխությունն իր բնույթով բուրժուադեմոկրատական էր, իսկ պայքարի միջոցները՝ պրոլետարական։ Երկրում տիրող քաղաքական վերնաշենքը անհաշտելի հակասության մեջ էր սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքի հետ։

Հեղափոխությունը սկսվեց 1905 թ. հունվարի 9-ին՝ Պետերբուրգում խաղաղ ցույցի դուրս եկած բանվորների գնդակոծությամբ։ Ցարի այդ արյունալի դատաստանն ալեկոծեց ողջ երկիրը։ Պետերբուրգում սկսված ընդհանուր գործադուլին արձագանքեցին Մոսկվայում, երկրի արդյունաբերական շրջաններում, ինչպես նաև Լեհաստանում, Մերձբալթյան երկրներում, Անդրկովկասում, այդ թվում և Արևելյան Հայաստանում։

Բանվորական գործադուլներն իրենց ազդեցությունն ունեցան նաև գյուղի վրա. սկսվեցին գյուղացիական շարժումները։ Դրանք ուժեղ էին հատկապես Ռուսաստանի կենտրոնում, Պոլտավայում, Անդրկովկասում (Դուրիայում)։ Հեղափոխական կոմիտեները բազմաթիվ կոչեր արձակեցին՝ ուղղված գյուղացիներին։

Ամռան-աշնան ամիսներին հեղափոխական շարժումը ամբողջ երկրում ավելի խորացավ։ 1905 թ. հոկտեմբերին սկսվեց Համառուսաստանյան քաղաքական գործադուլը։ Հոկտեմբերի 17-ից գործադուլները, տարածվելով ամբողջ երկրում, դարձան համառուսաստանյան։ Այս պայմաններում Նիկոլայ II-ը ստիպված եղավ հրապարակել հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որը հռչակում էր քաղաքական ազատությունների անխախտ հիմունքներ՝ անձի իսկական անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների և միությունների ազատություն։ Մանիֆեստը խոստանում էր նաև օրենսդիր Դումա և այդ Դումայի ընտրություններին հասարակության բոլոր այն խավերի ներկայացուցիչների մասնակցությունը, որոնք մինչ այդ զրկված էին ընտրական իրավունքից։

Մանիֆեստը մեծ ոգևորություն առաջացրեց հասարակության լիբերալ-դեմոկրատական շրջաններում։ Մանիֆեստը գոհունակությամբ ընդունեցին նաև մենշևիկները ու էսէռները։ Օրենսդիր Դումայի հրավիրումն արդեն ապացույց էր այն բանի, որ կառավարությունը հասարակության պահանջներին ընդառաջող ևս մի քայլ էր անում։ Շատ դանդաղ, բայց այնուամենայնիվ, Ռուսաստանը դառնում էր սահմանադրական միապետություն։ Միայն բոլշևիկներն էին, որ կոչ արեցին չհավատալ մանիֆեստին։ Նրանք հայտարարում էին, որ հեղափոխության և նրա թշնամիների ուժերի միջև ստեղծված հավասարակշռության պայմաններում անհրաժեշտ է շարունակել պայքարը՝ այն զինված ապստամբության հասցնելու և տիրող իրավակարգը վերջնականապես ջախջախելու համար։

Հեղափոխական իրադրության հասունացումը դեկտեմբերին երկիրը հասցրել էր ապստամբության շեմին։ Ղեկավարվելով Մոսկվայի խորհրդի կողմից, որը գտնվում էր բոլշևիկների ազդեցության տակ, բանվորները դեկտեմբերի 9-ին առաջինը ապստամբություն բարձրացրին և կռվեցին մինչև

դեկտեմբերի 18-ը։ Սակայն կառավարությանը հաջողվեց այլ վայրերից զորքեր փոխադրել, ճնշել ապստամբությունը և պարտության մատնել պրոլետարիատին։ Դեկտեմբերյան զինված ապստամբությունը ռուսական հեղափոխության բարձրակետն էր։ Հեղափոխության պարտության գլխավոր պատճառն այն էր, որ Մոսկվայի ապստամբությանը անմիջապես և միահամուռ չարձագանքեցին ամենուրեք։ Զինված ապստամբության անհամաչափ զարգացումը պատճառ դարձավ նրա պարտության։

Առերևույթ թվում էր, թե հաջորդ տարին՝ 1906 թ. ևս, հեղափոխությունը զարգանալու էր վերընթաց գծով, ուստի բոլշևիկները շարունակում էին հանդես գալ մարտական կարգախոսներով։

Համաձայն կառավարության խոստման, 1906 թ. գարնանը ամբողջ երկրում նշանակվեցին Առաջին պետական դումայի՝ խորհրդարանի (պառլամենտի) ընտրություններ։ Ընտրական օրենսդրությամբ, բնակչությունը չորս տարակարգերի (կուրիաների) էր բաժանվում՝ հողատիրական (կալվածատերեր), քաղաքային (բուրժուազիա), գյուղացիական և բանվորական։ Դումայում չգտնելով կայուն մեծամասնություն՝ կառավարությունը ընտրական արտոնություններ էր տվել կալվածատերերին՝ թույլ տալով նրանցից 2 հազար ընտրողի առաջադրելու մեկ պատվիրակ, այն դեպքում, երբ մեկ գյուղացիական պատվիրակը ներկայացնում էր 30 հազար ընտրող, իսկ բանվորականը՝ 90 հազար։

Հեղափոխության առաջին տարում ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ձախակողմյան թևի ներկայացուցիչները՝ Վ. Ի. Լենինը և լենինյանները, կիրառեցին Առաջին դումայի նախորդը հանդիսացող բուլիգինյան խորհրդակցական դումայի բոյկոտի տակտիկան։ Շարունակելով այդ տակտիկան և չնկատելով հեղափոխական ալիքի անկման նշանները, բոլշևիկները, ժողովրդի մեջ սահմանադրական պատրանքներ չառաջացնելու պատճառաբանությամբ, բոյկոտի ենթարկեցին նաև նոր հրավիրվող Դուման։ Նրանք Ռուսաստանում, այդ թվում և Հայաստանում, քարոզչական աշխատանքներ ծավալեցին առաջին խորհրդարանի ընտրությունները ձախողելու համար, սակայն հաջողությունն աննշան էր։

1906 թ. մայիսի 16-ին Երևանում հրավիրվում է քաղաքի և նահանգի բնակչության նախընտրական ժողովը։ Սահմանված կարգի համաձայն, նահանգի քրիստոնյա բնակչությունը (հայերը) պետք է ընտրեր երկու պատգամավոր, իսկ փոքրամասնությունը՝ մահմեդականները, մեկ։ Խանների և մոլլաների քարոզների ազդեցության տակ մահմեդական պատվիրակները ընտրեցին կալվածատեր Աղախան Էրիվանսկուն։ Հայերի և քրիստոնյա մյուս բնակչության ներկայացուցիչների կողմից, թեր ու դեմ կարծիքների բախումներիո հետո, ընտրվեցին համալսարանավարտ հասարակական գործիչներ Գ. Տեր-Պետրոսյանցը և Լ. Թումանյանը։ Նույն օրը Կարսում տեղի ունեցած ընտրություններին Դումայի պատգամավոր ընտրվեց կալվածատեր Զաքարյա բեկ Աջարսկին, Թիֆլիսի հայ բնակչության կողմից՝ բժիշկ Ա. Այվազյանը, Ելիզավետպոլի բնակչության կողմից՝ բժիշկ Ք. Բահաթրյանցը։ Վերոհիշյալ բոլոր հայ պատգամավորները անկուսակցական էին, բայց և հակված դեպի կադետականությունը։

Հայ իրականության մեջ ամենամեծ ազդեցություն ունեցող Հայ Հեղափոխական Դաշնակցությունն կուսակցությունը, դժգոհ ցարիզմի հայահալած ռազմականությունից, հարկ համարեց բոյկոտել Դումայի ընտրությունները։

Առաջին դումայի բացման նախօրյակին (1906 թ. ապրիլի 29) հրաժարական տվեց նրա նախաձեռնողը՝ նշանավոր քաղաքական-պետական գործիչ, թագավորի տևական հակակրանքը վաստակած և ազնվականաբյուրոկրատական գործիչների ատելությանն արժանացած Նախարարների խորհրդի նախագահ կոմս Սերգեյ Վիտտեն[1]։

---

[1] Տե՛ս А. В. Игнатьев, С. Ю. Витте, дипломат, М., 1989, с. 273—274.

Դումայի հրավիրման կապակցությամբ ֆինլանդական սեյմի, Ջեռնոգորիայի իշխանի, Պրագայի քաղաքագլխի և այլ հաստատությունների ու անձերի հղած ողջույնի հեռագրերի հետ միասին կարդացվում է նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հեռագիրը[2]։

Դումայի առաջին նիստերից մեկում ներքին գործերի նոր նախարար Պ. Ս. Ստոլիպինի ելույթը ամբողջովին արդարացրեց կառավարության հետադիմական ու սևհարյուրյակային քաղաքականությունը։

Դումայում կառավարության ներքին քաղաքականությունը մերկացնող ելույթներ ունեցավ ներքին գործերի նախարարի նախկին տեղակալ, իշխան Ս. Դ. Ուրուսովը։ Նա ցույց տվեց, որ սևհարյուրյակային-ջարդարարական կազմակերպությունները, որոնցով հեղեղված էր ամբողջ երկիրը, գործում էին պետական բարձրաստիճան պաշտոնյաների ուղղակի մասնակցությամբ, որոնք Ռուսաստանում տեղի ունեցող ամբողջ «խառնակության» պատճառը համարում էին լեհերին, հրեաներին և հայերին[3]։ Ելույթի վերջում նա հանգեց հետաքրքիր եզրակացության. «Այդ հանցագործ կիսակառավարական կազմակերպությունների գործունեության դադարեցման համար,— ասաց նա,— չունենք ոչ մի երաշխիք, քանի որ նրա գլխավոր ոգեշնչողները ընտվում են ներքին գործերի նախարարի ներգործության շրջանակներից դուրս[4]։ Ակնարկը, անշուշտ, ուղղված էր արքունիքին։

Բարձրագույն ներկայացուցչական մարմին համարվող խորհրդարանում նույնիսկ, պետական-բյուրոկրատական պտղտոնեության հետ սերտաճած աջ պատգամավորները չէին քաշվում բացահայտ իրենց արհամարհական վերաբերմունքը ցույց տալ այլազգիների նկատմամբ։ Այսպես, երբ ագրարային հարցերի քննարկման ժամանակ վրաց պատգամավոր Ծերեթելին իր ելույթի վերջում հայտարարեց, թե կառավարության քաղաքականությունը երկիրը հասցրեց ռուս-ճապոնական պատերազմում Մուկդենի և Ցուսիմայի պարտություններին, ապա աջ պատգամավոր Կոլեպովսկին, շփոթելով հռետորի ազգությունը, տեղից բացականչեց. «...և հայերի ներկայությունը ռուսական պառլամենտում...», նրան Ծերեթելին պատասխանեց. «Այս հարցում ևս Կոլեպովսկին չարաչար սխալվում է»[5]։

Մասնակցելով Դումայի աշխատանքներին, թեր ու դեմ կարծիքներ հայտնելով երկրի դրության վերաբերյալ, ընդհանուր խնդիրների շուրջ, Անդրկովկասի հայ պատգամավորները 1906 թ. հունիսի 12-ին հատուկ հարցով դիմեցին Նախարարների խորհրդի նախագահին՝ տակավին 1905 թ. դեկտեմբերի 6-ից Բաքվում սկսված և 1906 թ. շարունակվող և համարյա ամբողջ Անդրկովկասում տարածված հայ-թաթարական[6] ընդհարումների մասին։ Նրանք բազմաթիվ մերկացնող փաստեր հրապարակեցին ինչպես կառավարության և արքունիքի, այնպես էլ կովկասյան իշխանությունների սադրիչ գործունեության, ապիկարության և սնանկության մասին։ Այս հարցապնդումը պաշտպանություն գտավ թաթարական, վրացական և լիբերալ ուղղություններ արտահայտող մի շարք ռուս պատգամավորների կողմից։

Պետք է նկատել, որ և՛ առաջին և՛ մյուս բոլոր դումաներում հայ պատգամավորները քաղաքական բավական հասունություն ցուցաբերելով՝ աշխատում էին իրենց ելույթները համաձայնեցնել կենտրոնի պատգամավորների հետ, ուր մեծամասնություն էին կազմում լիբերալ-դեմոկրատները և հատկապես սերտ հարաբերություններ էին հաստատում սահմանադրական-դեմոկրատական կուսակցության (կադետների) մտավորական գործիչների հետ։ Հայ պատգամավորները ջանում էին քաղաքական եզրեր գտնել նաև

---

2 Первая Государственная Дума, СПб, 1907, с. 29.

3 Նույն տեղում, էջ 51—53։

4 Նույն տեղում, էջ 54։

5 Сборник речей депутатов Гос. Думы I и II созыва, СПб., 1908, с. 429.

6 Նախահեղափոխական դրականության մեջ ադրբեջանցիներին թաթարներ էին անվանում։

ձախակողմյան կուսակցությունների, մասնավորապես «աշխատավորական խմբակների» («Трудовики»), ինչպես նաև սրանց հետ սերտորեն կապված սոցիալիստ-հեղափոխականների (էսէռների) հետ։ Նրանք, անշուշտ, գիտակցում էին, որ ժողովրդի սոցիալական և ազգային շահերի պաշտպանությամբ միայնակ հնարավոր չէ հանդես գալ, իսկ ռուս առաջադեմ պատգամավորներն իրենց հերթին զեկավարվում էին ոչ միայն հումանիստական սկզբունքներով, այլև ելնում էին հայ ժողովրդի ռուսամետ քաղաքական կողմնորոշումից, որը նրանք ավելի լավ էին գիտակցում, քան աջ պատգամավորները։

1906 թ. հունիսի 12-ի հարցապնդման հեղինակները և նրանց համակիր ռուս պատգամավորները կովկասյան իշխանությունների հանցավոր անգործությունը մերկացնող բավական համարձակ ելույթներ ունեցան։ Մասնավորապես ռուս պատգամավորներից մեկն իր ելույթում այն դիտողությունն արեց, որ կովկասյան ազգություններին իրար դեմ գրգռելու և ընդհարումներ առաջացնելու ճանապարհով ռեակցիան ձգտում է արյունաքամ անելով թուլացնել նրանց՝ ռուսացնելու, ասեմիլացնելու համար[7]։ Փաստեր հրապարակվեցին կենտրոնական իշխանությունների՝ Նախարարների խորհրդի նախագահի և ներքին գործերի նախարարի միջև շատ հարցերի շուրջ եղած տարակարծությունների, կառավարության նկատմամբ Կովկասի փոխարքայի բոլորովին անկախ և ինքնիշխան դիրքի մասին և այլն։ Պատգամավորների ելույթներում նշվում էր, որ ինչպես կենտրոնական, այնպես էլ կովկասյան տեղական իշխանությունները առերևույթ որոշ համակրական վերաբերմունք ցուցաբերելով մահմեդականների նկատմամբ, նրանց հայերի դեմ գրգռելու համար, իրականում թաթարական բնակչությանը ևս ենթարկում էին ոչ պակաս հալածանքների։

Դումայում ընթերցվում էին ջարդերով բռնկված վայրերից պատգամավորների հասցեով ստացվող բազմաթիվ նամակներ, հեռագրեր, թղթակցություններ, միջնորդություններ ու աղերսագրեր։ Բավական պերճախոս փաստեր հրապարակվեցին կառավարության կենտրոնական և տեղական ներկայացուցիչների զայրացուցիչ վարքագծի մասին։ Հայ պատգամավորները Բահաթրյանցը կառավարությանը համեմատելով անշնորհք բազմագլխանի հիդրայի հետ, վճռականորեն պահանջեց ժողովրդին բարիք չցանկացող մարդկանց հեռացում[8]։

---

7 Տե՛ս Государственная Дума первого созыва, стенографические отчеты, сессия, СПб. 1908, I, т. II, с. 1227—1228, 1230.

8 Նույն տեղում, էջ 1231—1236։

Պետք է նկատել, որ հայ պատգամավորները նրբանկատություն ցուցաբերելով՝ Դումայում չէին անդրադառնում այն խնդրին, որ ընդհարումների ժամանակ նախահարձակ կողմ եղել են թաթարները, որի մասին վկայում են ոչ միայն բազմաթիվ արխիվային վկայագրեր, այլև ռուսական պարբերականներում հրապարակված նյութեր, այդ թվում նաև՝ Վ. Ի. Լենինի ու Մաքսիմ Գորկու հոդվածները։ Մասնավորապես, Վ. Ի. Լենինը, մերկացնելով ցարական պատժիչ ուժերի սադրիչ արարքները, արձանագրել է. «Բռնացել են ոստիկանական մեխանիզմների զսպանակները, բավական չեն սոսկ ռազմական ուժերը միայն։ Պետք է բորբոքել ազգային ռասայական թշնամանք, պետք է «սև հարյուրյակներ» կազմակերպել քաղաքային (և գյուղական նույնպես հասկանալի է նաև գյուղական) մանր բուրժուազիայի ամենասակավ զարգացած խավերից, պետք է փորձել գահի պաշտպանության համար համախմբել բուն իսկ բնակչության մեջ եղած բոլոր հնադարյան տարրերին, պետք է խմբակների դեմ ոստիկանության պայքարը դարձնել ժողովրդի մի մասի պայքարը մյուս մասի դեմ։ Հենց այդպես է այժմ վարվում կառավարությունը Բաքվում՝ թաթարներին գրգռելով հայերի դեմ» (Վ. Ի. Լենին, երկ, հ. 9, 411—412)։ Անդրկովկասում հայ-թաթարական ընդհարումների ժամանակ գլուխ էր բարձրացրել պանիսլամիզմը։ Այդ չի վրիպել Պետերբուրգում լույս տեսնող «Новая жизнь» թերթի ուշադրությունից։ «Ում է ոգևորում պանիսլամիզմը»։ Եվ պատասխանում է. առաջին հերթին բուրժուական մտավորականությանը, որը երազում էր միավորել բոլոր «ուղղափառներին» խալիֆի իշխանության ներքո... Երկրորդ՝ թաթարական բեկերին, խաներին, աղալարնե-

Մոտավորապես նույն բովանդակությամբ ելույթներ ունեցան նաև մյուս հայ պատգամավորները։ Նրանք ցույց էին տալիս, որ տակավին XIX դ. վերջերից ծայր առած հայահալած քաղաքականությունն ուղեկցվում էր թաթարների դեմ թշնամություն սերմանելու քաղաքականությամբ և իշխանությունները, շահարկելով վերջիններիս կրոնական զգացմունքները՝ նրանց գրգռում էին հայերի դեմ։ Պատգամավորները հիշատակում էին կառավարության՝ տեղացիների նկատմամբ խտրականության նաև այնպիսի փաստերի մասին, ինչպիսիք էին ուղղափառություն ընդունած հայ գյուղացիներին հողով ապահովելը, նրանց հատուկ հովանավորության տակ վերցնելը և այլն։ Հարցապնդման մասնակիցները այս և նման բազմաթիվ փաստեր բերելուց հետո պահանջում էին Դումայի մեծամասնության կողմից ընտրված և նրա առջև պատասխանատու կառավարություն[9]։

Առաջին դումայում խիստ քննադատական, բայց, ըստ էության, չափավոր ընդդիմադիր տրամադրությունների կողքին լսվում էին նաև սուր, հեղափոխական-մարտական ելույթներ՝ գյուղացիական զանգվածների ներկայացուցիչ-պատգամավորների կողմից։ Վերջիններիս խոսքը, որ հողի և ազատության մասին էր, քննարկվող բոլոր հարցերի առանցքն էր, որը խիստ վախեցրեց ցարին ու կառավարությանը, ուստի և որոշվեց խլացնել նրանց ձայնը։

1906 թ. հունիսի 8-ին Նիկոլայ II-ը հրամանագիր տվեց կառավարող Սենատին՝ Պետական դուման արձակելու և նոր Դումա հրավիրելու մասին՝ դումարման ժամկետ նշանակելով 1907 թ. փետրվարի 20-ը։

Պետական դումայի արձակումը հեղափոխության դեմ ցարիզմի հարձակման ընդհանուր քաղաքականության արտահայտություններից էր։ Դումային հետևեց պետական խորհրդի արձակումը։ Պաշտոնից ազատվեց նաև նոր հաստատված Նախարարների խորհրդի նախագահ Ի. Լ. Գորեմիկինը։ Վերջինիս փոխարեն նշանակվեց Պ. Ա. Ստոլիպինը, որը մինչ այդ, ինչպես ասվեց, արդեն ներքին գործերի նախարարն էր։ Ստոլիպինի նշանակումը միաժամանակ ծայրամասերի վրա ճնշման սաստկացման նշան էր։ Թեպետ Կովկասի փոխարքա կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը լիովին արդարացնում էր կառավարության հույսերը՝ Կովկասը «հանգստացնելու» հարցում, այնուամենայնիվ, առձունական որոշ շրջաններ դժգոհ էին փոխարքայի «մեղմ վարքագծից»։ Ամբողջ հեղափոխության ընթացքում, ինչպես նաև հետագա տարիներին, Պետերբուրգի և Մոսկվայի սևհարյուրյակային մամուլը, հատկապես «Новое время»-ն և նրա սյուները հանդիսացող Ա. Ս. Սուվորինն ու Մենշիկովը մշտապես քննադատում էին փոխարքային՝ «կովկասցիներին երես տալու համար»։ Մինչդեռ, Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը, ի տարբերություն իր

ին և իր դարն ապրած ֆեոդալիզմի զանազան ժառանգորդներին, որոնք նախանձով են նայում արտասահմանում (իրենց հարազատ Պարսկաստանում և Թուրքիայում) տիրող կամայականության և բռնության աշխարհին, վախենում են դալիք ռեֆորմներից, երանությամբ և հույսով կառչում պանիսլամիզմի ցնցոտիներից։

Եվ վերջապես երրորդ, «պանիսլամիզմը ոգևորում է թաթարական արդյունարերական բուրժուազիային, որը զրկելով խուլիգաններին, հրդեհների և ջարդերի անտանելի պայմաններ է ստեղծում ոչ մուսուլմանների համար, դուրս է մղում նրանց հայրենի վայրերից և այսպիսով ազատվում է վտանգավոր և ուժեղ մրցակիցներից»։ (Новая жизнь, *1905, № 11)։ Տե՛ս նաև* Г. А. Галоян, Рабочее движение и национальный вопрос в Закавказье, 1990—1921, Ереван, 1969, с. 75, *Գ. Բ. Ղարիբջանյան, Լենինը և Անդրկովկասը 1893—1924, (1905—1917), Երևան, 1973, էջ 108։*

Հարկավ, Աղրբեջանում ևս կային պարկեշտ ու ազնիվ քաղաքացիներ, որոնք դեմ էին կոտորածներին, որոնցից ամենանշանավորը, երևի, հեղափոխական-ինտերնացիոնալիստ Մեշադի Ազիզբեկովն էր։

[9] Государственная Дума первого созыва. стенографические отчеты, сессия I, т. II, с. 1231—1236.

քննադատների, որոնք բռնի մեթոդների կողմնակիցներ էին, անհամեմատ ավելի հեռատես և ճկուն պաշտոնյա էր և բոլորովին «երես չտալով կովկասցիներին», ազգային հալածանքների մեղմացման և երկրամասում որոշ բարենորոգումներ մտցնելու կողմնակից էր։

Առաջին և հետագա մյուս դումաներում փոխարքայի քաղաքականության հետևողական քննադատը Բեսարաբիայի կալվածատերերի ներկայացուցիչ, սևհարյուրյակային, միապետական կազմակերպությունների և նրանց կազմակերպած ջարդերի, սպանությունների ոգեշնչող «Միքայել հրեշտակապետի միության» փոխնախագահ Վ. Մ. Պուրիշկևիչն էր, որին Վ. Ի. Լենինը համարել է «վայրենի կալվածատեր և հին դերժիմորդա (ջարդարար)»[10]։

Պուրիշկևիչը, կոմս Վ. Ա. Բոբրինսկին, Ն. Ե. Մարկով 2-րդը և սևհարյուրյակային այլ գործիչներ Ռուսաստանի կազմի մեջ մտնող այլազգիների՝ հրեաների, լեհերի, ուկրաինացիների, հայերի, վրացիների և այլ ժողովուրդների ոչ միայն ազատագրական պայքարը, այլև ինքնուրույն գոյությունն ավելորդ էին համարում։

Ծայրամասերում բնակվող ժողովուրդների մշակութային կյանքի առաջադիմությունը միապետական-սևհարյուրյակայինների աչքում երկրից անջատվելու տրամադրությունների անժխտելի ապացույցներ էին։ Փաստերը գլխիվայր դնելով, նրանք Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխության պատճառը կովկասյան «խառնակություններին» մեջ էին փնտրում և այնքան էին զարհուրած, որ օրեցօր սպասում էին երկրի քաղաքական քարտեզի փոփոխության։ Իսկ մյուս ռեակցիոներ Մարկով 2-րդը Անդրկովկասի և նույնիսկ Կովկասի բոլոր ժողովուրդների, հատկապես Պարսկաստանում ապրող նրանց հայրենակիցների, մի ընդհանուր ֆեդերացիա էր տեսնում՝ ընդդեմ Ռուսաստանի։ «Ես գտնում եմ և հայտարարում, որ անդրկովկասյան-հայկական-վրացական-դաղստանյան-ադրբեջանական-թավրիզյան-քրդական նահանգների միությունը իրապես հնարավոր է, և ես կարծում եմ, որ իմաստուն պետական իշխանությունը, ես այդ ընդգծում եմ, պետք է այդ հնարավորությունը հաշվի առնի։ Պետք է կանխատեսի, որպեսզի անակնկալների չգա»,—Դումայի ամբիոնից բացականչում է Մարկով 2-րդը[11]։ Այս ելույթը հնչել է Երրորդ Դումայում, ուր աջերը շարունակում էին քննադատել փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին՝ հեղափոխության ընթացքում թույլ տված «լիբերալ» մեղքերի համար։

Հետագայում Կովկասյան հարցապնդման կապակցությամբ Դումայում ունեցած իր ելույթում Պուրիշկևիչը, անդրադառնալով մոտիկ անցյալին, «ցեխ շպրտեց» Վորոնցով-Դաշկովի և նրա պաշտոնյաների վրա։ Հեղափոխության ընթացքում տեղական վարչության «հակապետական զանցառություններից» բազմաթիվ փաստեր բերելով, նա հայտարարեց, թե այլ բան չէր կարելի սպասել այն երկրամասից, ուր Քութայիսի նահանգապետ էր նշանակված «հեղափոխական» Ստարոսելսկին, երկաթուղիների պետ՝ «լիբերալ» Նեյդեբաուերը, Երևանի նահանգապետ՝ կոմս Տիղենհաուղենը, որն իր, իբր թե թուլակամ բնավորության համար «խանում-փաշա» ածականն էր վաստակել, իսկ փոխարքան էլ այն աստիճան ծեր է, որ պետական գործերը վարելիս «կոնֆետը բերանում ննջում է»[12]։

Մի փոքր շեղվելով նյութից, արձանագրենք այն հետաքրքիր փաստը, որ Բեսարաբիայից առաջադրված պատգամավորների մեջ Առաջին և հետագա բոլոր դումաների մշտական անդամ էր նաև հայազգի Ա. Կ. Դեմյանովիչը։ Չնայած Վիեննայում ստացած բարձրագույն ինժեներական կրթությանը, նա զբաղվում էր վաճառականությամբ և միաժամանակ խոշոր հողատեր էր։ Դեմյանովիչը հայացքներով աջ էր, հարում էր այսպես կոչված

10 Վ. Ի. Լենին, երկ, հ. 15, էջ 338։

11 Кавказский запрос в Государственной Думе, Тифлис, 1909, с. 197.

12 Տե՛ս նույն տեղում, էջ 33, 39, 45։

ռուս «նացիոնալիստների» խմբին։ Իր միապետական հավատամքը ձևակերպել էր այսպես. «Նրանց հետ՝ ովքեր Ռուսաստանի ժողովուրդներին բարիք են ցանկանում»[13]։ Դավանանքով նա կաթոլիկ էր, կրթություն էր ստացել Ավստրիայի մայրաքաղաքում։

1907 թ. հունվարին Անդրկովկասում սկսվեց երկրորդ պետական դումայի ընտրարշավը։ Ընտրական համակարգը մնում էր նույնը։ Անցյալի օրինակով Երևանի նահանգում նորից կազմվեց երկու ընտրական ժողով։ Դարձյալ քրիստոնյա աղգաբնակչության կողմից առաջադրվեցին երկու, մահմեդական բնակչության կողմից՝ մեկ պատգամավոր։ Բոլշևիկները ընդունելով իրենց սխալը Առաջին պետական դուման բոյկոտի ենթարկելու կապակցությամբ, որոշեցին եռանդով մասնակցել ընտրություններին։ Ուստի, Երևանի նահանգից պատգամավոր առաջադրեցին «Факты» սոցիալ-դեմոկրատական թերթի խմբագիր Գեորգի Սոկոլովսկուն։ Սակայն նահանգական իշխանությունները, խիստ անհանգստացած հեղափոխականի թեկնածության առաջադրումով, պատրվակ բռնելով բնակարան վարձելու համար պայմանագիր չունենալը, ցուցակներից հանել տվեցին Սոկոլովսկու անունը։

Հետևելով էսէռական կուսակցության օրինակին՝ երկրորդ պետական դումային մասնակցելու հայտ ներկայացրեց «Դաշնակցություն» կուսակցությունը։ 1907 թ. սկզբներից դաշնակցական մամուլն ու գործիչները լայն ընտրարշավ ծավալեցին։

Հունվարի վերջերին—փետրվարի սկզբներին Անդրկովկասում ավարտվեցին Դումայի պատգամավորների ընտրությունները։ Երևանի նահանգի կողմից երկրորդ Դումայի պատգամավորներ ընտրվեցին ուսուցիչներ Հ. Սազաթելյանը և Ս. Տիգրանյանը, ադրբեջանական բնակչության կողմից՝ նույնպես ուսուցիչ Մահմեդ-Աղա Շախտախտինսկին։

Ուժեղ պայքար ծավալվեց դաշնակցականների և հայ լիբերալների միջև՝ Դանձակի նահանգում։ Այստեղ 1907 թ. փետրվարի 6-ին ընտրությունների առաջին աստիճանով անցած պատվիրակների մեջ իր դիրքով ամենանշանավորը երդվյալ հավատարմատար Սամսոն Հարությունն էր։ Սակայն հեղափոխական շարժման դեռևս բարձր ալիքի վրա դաշնակցականների կարգախոսները ավելի սրտամոտ էին տակավին պարտությունը չզգացող ժողովրդին, ուստի և ձայների մեծամասնությամբ պատգամավոր ընտրվեց Բանանց գյուղի ուսուցիչ Ստեփան Տեր-Ավետիքյանը, որը չկարողացավ մի երևելի գործունեություն ծավալել Դումայում և նրանից դուրս։ Միայն Կարսի մարզում պատգամավոր ընտրվեց անկուսակցական Հովսեփ Աթաբեկյանը, որը հայացքներով մոտ էր կադետներին։ Թիֆլիսում նախընտրական պայքար ծավալվեց դաշնակցականների, բոլշևիկների և մենշևիկների միջև, և փետրվարի 6-ի ժողովում պատգամավոր ընտրվեց մենշևիկ Արշակ Զուրաբյանը։

Երկրորդ պետական դուման բացվեց 1907 թ. փետրվարի 20-ին։ Ինչպես Առաջին, այնպես էլ երկրորդ դումայի գործունեության մեջ գլխավորը ագրարային-գյուղացիական հարցն էր։

Երկրորդ Պետական Դումայի նիստերում արծարծված կովկասյան իրականությանը վերաբերող ցավոտ հարցերից էր երկրամասում զեմստվո մտցնելու խնդիրը, որը չերմ արձագանք էր գտնում կադետ պատգամավորների շրջանում[14]։ Տեղական ինքնավարության՝ զեմստվո մտցնելու հարցը կադետները կապում էին գավառական վարչություններ և տեղական դատարաններ հիմնելու, վերաբնակեցման քաղաքականությունը դադարեցնելու, հողազուրկ և սակավահող գյուղացիներին հող բաժանելու և այլ խոստումների հետ։ Այսպիսի հարցադրումը բոլշևիկները համարում էին ամբոխավարություն, որն

---

13 Государственная Дума I созыва, справочник, СПб, 1913, с. 32, Государственная Дума I созыва, с. 7.

14 Տե՛ս Դ. Ա. Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Երևան, 1964, էջ 224—246։

անհամատեղելի էր նրանց ծայրահեղական դիրքորոշման հետ։ Բոլշևիկների նպատակը ցարիզմի հիմնահատակ կործանումն էր։

Կարսի պատգամավոր Հովսեփ Աթաբեկյանը, ժամանելով Պետերբուրգ, անմիջապես կապեր հաստատեց կադետների հետ և նրանց օժանդակությամբ որոշեց իր հարազատ քաղաքում բարձրացնել տեղական ինքնավարություն մտցնելու խնդիրը։ Հատուկ գրությամբ Աթաբեկյանը բացատրեց, որ չնայած իր աշխարհագրական դիրքի կարևորությանը, աճած ռազմական և տնտեսական նշանակությանը, որպես Ռուսաստանի և Թուրքիայի մերձեցնող օղակ, Կարսը շարունակում է կառավարվել ոստիկանական վարչության կողմից։ Նա հիշեցնում էր, որ տակավին XIX դ. վերջերին (սկսած 1893, 1898 թթ.) և XX դ. սկզբներին (1904 թ.) այս հարցը մի քանի անգամ գրվել է քննարկման Կովկասի կառավարչապետերի առաջ։ Նույնիսկ 1905 թ. մարտի 10-ին մարզի զինվորական նահանգապետը փոխարքային է ներկայացրել այդ խնդիրը և մատնանշել դրա լուծման անհրաժեշտությունը։ Նահանգական իշխանություններն իրենց որոշումը հիմնավորում էին հետևյալ նկատառումներով.

1. Կարսում շատ են միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցողները։ 2. Ոստիկանությունը, ինքնավարության ֆունկցիաները վերցնելով, հնարավորություն չի ունենում կատարելու իր պարտականությունները։ 3. Անդրկովկասում Կարսի նման քաղաքներն ունեն ինքնավարություն։

Աթաբեկյանը պահանջում էր ինքնավարություն մտցնել՝ համաձայն դեռևս 1892 թ. հրատարակված օրենքների[15]։ Ինչպես ասվեց, Աթաբեկյանի առաջարկը համաձայնեցված էր օրենսդրական հանձնաժողովներում աշխատող 37 կադետ պատգամավորների հետ, որոնցից նշանավորներն էին Ռոդիչևը, Ստրուվեն, Մակլակովը, Տեսլենկոն, Դոլգորուկովը, Ռոստովի և Նոր Նախիջևանի պատգամավոր Աճեմյանը և ուրիշներ։

Կադետների պաշտպանությունից ոգևորված՝ Աթաբեկյանը գիմում է ավելի համարձակ քայլերի։ Այսպես՝ ապրիլին նա Դումա է ներկայացնում ևս մեկ զեկուցագիր, որով Նախարարների խորհրդի նախագահից պահանջում էր շտապ քննարկման դնել Կովկասին վերաբերող մի շարք հարցեր, դրանց թվում՝ 1) փոխարքայի խորհուրդը փոխարինել ժողովրդից ընտրված խորհրդակցական մարմնով, 2) բարեփոխել Կովկասում գոյություն ունեցող գավառական ոստիկանական հաստատությունները, 3) բարեփոխել գյուղական դատարանները և մայրենի լեզու մտցնել այդ դատարաններում, 4) վերացնել Կարսի և Բաթումի զինվորական դատարանները, 5) մայրենի լեզվով դասավանդել սկզբնական և ժողովրդական ուսումնարաններում, տեղական լեզուների դասավանդումը կանոնավորել միջնակարգ ուսումնարաններում, 6) վերանայել գոյություն ունեցող ջրաբաշխման օրենքները։ Աթաբեկյանի ելույթի մյուս առանցքային հարցը՝ Ռուսաստանի ներքին նահանգներից վերաբնակիչների հոսքը դեպի Կովկաս դադարեցնելու խնդիրն էր։ Այսպիսի հարցադրումը արդեն ըստ էության հեղափոխությանը մասնակցող ոչ ռուս ժողովուրդների ազատագրական պայքարի, այդ թվում և մշակութային ինքնորոշման պահանջներից էր բխում։

Սակավահողության պայմաններում այլազգիների դժգոհությունն էր առաջացնում գյուղական բնակչությանը Ռուսաստանի կենտրոնական նահանգներից տեղափոխելու և Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում բնակեցնելու քաղաքականությունը։ «Վերաբնակեցման ֆոնդը ստեղծվում է,— գրում էր այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինը,—բնակիչների հողային իրավունքների աղաղակող խախտման միջոցով, իսկ վերաբնակեցումը կատարվում է ի փառս ծայրամասերի ռուսականացման՝ միևնույն նացիոնալիստական սկզբունքի»[16]։

---

15 Տե՛ս Государственная Дума второго созыва. стенографические отчеты, т. I, СПб. 1907, с. 1534—1535.

16 Վ. Ի. Լենին, երկ, հ. 19, էջ 101։

Դումայի նիստերում, նրա առանձին հանձնաժողովներում ելույթներ ունեցան նաև Հ. Սաղաթելյանը, Ս. Տիգրանյանը, Մ. Շախտախտինսկին, Ս. Տեր-Ավետիքյանը[17]։ Դումաների պատգամավորների ելույթները, որ սղագրվում էին և տպագրվում առանձին հատորներով (բացի փակ նիստերում տեղի ունեցող ելույթներից), բարեբախտաբար պահպանվել են գրադարանների հատուկ ֆոնդերում։ Դրանք մոտ մի տասնյակի չափ հաստափոր ժողովածուներ են, և ուսումնասիրողները կարող են օբյեկտիվ պատկերացում կազմել դումայում գործող կուսակցությունների, անհատ պատգամավորների, պետական այրերի գործունեության մասին, գործունեություն, որը դժբախտաբար մինչև վերակառուցման ժամանակները աղավաղվել էր պատմական գիտության և ընդհանրապես հասարակագիտության մեջ։

Վ. Ի. Լենինը Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին հանդես եկած կուսակցությունների ագրարային ծրագրերի քննադատությանը նվիրված աշխատության մեջ անդրադարձել է նաև Հ. Սաղաթելյանի և Ս. Տեր-Ավետիքյանի ելույթներին և նշել նրանց մերձակցությունը էսէռների հետ։

«Ահա Ուսպենսկին և Սաղաթելյանը («դաշնակցություն», որը շատ մոտ է էսէռներին, իսկ «երիտասարդները» նույնիսկ մտնում են Ս. Ռ. կուսակցության մեջ) դնում են համայնքի հարցը։ Վերջին հռետորը բավականին նաիվ կերպով նկատում է. «Ցավոք սրտի պետք է նկատել, որ զարգացնելով հողի աղդայնացման լայն թեորիան, թույլ են ընդգծում կենդանի մնացած ինստիտուտը, որի հիման վրա կարելի է առաջ շարժվել... Այդ բոլոր սարսափներից (Եվրոպայի սարսափները, մանր տնտեսության ավերումը և այլն) պաշտպանում է համայնքը»[18]։

Հետագայում ևս Դաշնակցություն և էսէռական կուսակցություն համագործակցությունը շարունակվեց երկար տարիներ, բավական է հիշել Ա. Ֆ. Կերենսկու սերտ հարաբերությունները հայկական քաղաքական շրջանակների, մասնավորապես դաշնակցության հետ։

Անդրկովկասի պատգամավորներից հակակառավարական, ձախ սոցիալ-դեմոկրատական դիրքերից ելույթներ ունեցավ Թիֆլիսի պատգամավոր Արշակ Զուրաբյանը (հետագայում՝ մենշևիկ-ինտերնացիոնալիստ)։ Դումայում նա առաջին անգամ հանդես եկավ մարտի 27-ին՝ բյուջեի հոդվածների քննարկման հարցերի կապակցությամբ։ Չհամաձայնելով կադետների հետ՝ նա հայտարարեց, որ խոսք կարող է լինել ոչ թե Դումայի ունեցած մեծաքանակ ֆինանսական իրավունքների, այլ այդպիսիք բոլորովին չունենալու մասին։ Անցնելով բյուջեի եկամուտների աղբյուրների հարցին՝ նա ցույց տվեց, թե ինչպիսի կեղեքման էին ենթարկվում ժողովրդական զանգվածները՝ ուղղակի և անուղղակի հարկման հետևանքով։

Երկրում տիրող սովի և աղքատության պայմաններում, երբ միլիոնավոր գյուղացիներ «անոթությունից ուռչում էին», իսկ բանվորների մեջ համատարած գործազրկություն էր, կառավարության փորձը՝ Դումայի հավանությամբ ավելացնել պետական հարկերը, Զուրաբյանը, հռետորական չափազանցության մեջ ընկնելով, համեմատում էր ստրուկների հանդեպ ստրկատերերի ունեցած վերաբերմունքի հետ։

Խոսելով օղու և սպիրտի վաճառքի պետական մենաշնորհ հաստատելու մասին (որով մի հարվածով լրիվ էքսպրոպրիացիայի ենթարկվեց 100 հազար մանր օղեվաճառ և գինեվաճառ, նրանցից կորզելով 40—80 միլիոն ռուբլի), նա ցույց տվեց, որ կառավարությունը միաժամանակ մեծագույն հոգատարություն ցուցաբերեց խոշոր արդյունաբերողների շահերի նկատմամբ, բյու-

---

17 Տե՛ս Государственная Дума, второй созыв, стенографические отчеты, т. I, СПб. 1907, с. 203, 315—316, 321, 436—439, 1121—1133, 1233—1237, 1707, 1717, 1817—1829.

18 Վ. Ի. Լենին, նույն, հ. 13, էջ 513—514։

ջեի մեջ հատուկ կետ մտցնելով վերջիններիս կրած «վնասները» 12 միլիոն ռուբլով հատուցելու մասին։ Այնուհետև, նա խոսում է երկաթուղային տնտեսության անմխիթար վիճակի, անտառային զանգվածների գիշատիչ շահագործման, առաջին անհրաժեշտության առարկաների՝ շաքարի, նավթի, թեյի բարձր գների մասին։ Վերջում Զուրաբյանը անդրադարձավ նշանավոր կադետ Պ. Ստրուվեի ելույթին։ «Ստրուվեն շատ է դուր գալիս պաշարել բառը, ինչ էլ անում է, նրան թվում է, թե նա պաշարում է կառավարությանը,—Դումայի ձախակողմյան թևի ծափահարությունների տակ հայտարարեց Զուրաբյանը,—ներկա դեպքում նույնն է, բայց ակնհայտ է, որ Ստրուվեն շատ քիչ է ծանոթ պաշարման սկզբունքներին։ Նա չգիտի, որ պաշարման գլխավոր պահանջը պաշարվածներին հացից և առաջին անհրաժեշտության առարկաներից զրկելն է։ Պաշարողը իրավունք չունի ոչինչ ներս թողնել, բայց Ստրուվեն տալիս է սննդամթերք և ասում՝ «ես պաշարում եմ»։ Ստորագրելով այն բյուջեն, որը մեզ ներկայացրել է հին ռեժիմը, մենք ստորագրում ենք այդ ռեժիմի տակ և նրան հնարավորություն ենք տալիս ավելի սեղմելու ժողովրդի վզին գցած օղակը»[19]։

Ապրիլի 16-ին Դումայի փակ նիստում միացյալ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից ելույթ ունեցավ Ա. Զուրաբյանը։ Նա, քննադատելով պետական համակարգը և բացահայտելով միապետական զորքերի կրած պարտության պատճառները, մերկացրեց ցարական կառավարության ռազմական հենարանը։ Զուրաբյանի հաջորդ ելույթը վերաբերում էր բանակին։ Առիթը ներքին գործերի նախարարի տեղակալի ճառն էր՝ բանակը հեղափոխական տարրերից զերծ պահելու մասին։ Նրա այն հայտարարությանը, թե «բանակը չպետք է մասնակցի քաղաքականությանը», Զուրաբյանը պատասխանում է. «Կառավարությունը զորական միավորումները օգտագործում է հեղափոխական շարժումները ճնշելու համար, դրանով իսկ նրանց մասնակից անում քաղաքականությանը»։ Միաժամանակ, նա համերաշխում է պատգամավոր Աճեմյանի հետ, որը «Անձի անձեռնմխելիության» հանձնաժողովի կողմից արված զեկուցման մեջ բացահայտել էր կառավարության արատավոր քաղաքականությունը բանակի հարցում։ Իր ելույթի վերջում հռետորը ծափահարությունների տակ հայտարարեց. «Բանակը պետք է սերտ կապված լինի ժողովրդի հետ, կապված ամուր թելերով։ Բանակի ժողովրդայնությունը նրա հաջողությունների միակ գրավականն է, ուստի կառավարության ձգտումը՝ հարմարեցնել նրա կազմը իր նպատակներին, իր խմբակային շահերին, պետք է հակահարված հանդիպի Դումայի կողմից»[20]։

Պատգամավոր Մ. Աճեմյանը ավարտել էր Մոսկվայի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետը և որպես բժիշկ մասնակցել ռուս-ճապոնական պատերազմին։ Միաժամանակ, արտահերթ հանձնելով քննությունները, նա 1-ին կարգի դիպլոմով ավարտել էր նաև իրավաբանական ֆակուլտետը։ Աշխատում էր որպես երդվյալ հավատարմատար, տպագրվում էր գիտական հանդեսներում։ Քաղաքական հայացքներով կադետ էր[21], իրավաբանական աշխարհում՝ ճանաչված հեղինակություն։

1907 թ. մայիսի 24-ին Ա. Զուրաբյանը Դումայում ունեցավ իր վերջին ելույթը՝ Կովկասի կապակցությամբ արված հարցապնդման ժամանակ։ Զուրաբյանը ցույց տվեց, որ կառավարության բարձրագույն հաստատություններում փոխարքայի ներկայացուցիչ Յու. Նոլդեի՝ Դումայում տված բացատրություններն այն մասին, թե Անդրկովկասում գործող կառավարական պատ-

---

19 Государственная Дума, второй созыв, стенографические отчеты, т. I, с. 1161, 1165.

20 Տե՛ս Государственная Дума, указатель к стенографическим отчетам, второй созыв, СПб, 1907 с. 81; Государственная Дума, второй созыв, стенографический отчет, т. II, СПб, 1907, с. 922—933.

21 Տե՛ս Члены Государственной Думы, третий созыв, М., 1913, с. 80.

ժախմբերը հետ են կանչված, հիմնազուրկ են և իրականությանը չեն համապատասխանում։ Այնուհետև, անցնելով Արևելյան Հայաստանի գյուղացիների վիճակի հարցին, ընթերցեց Ելիզավետպոլի նահանգում հաշտարար միջնորդ Երմոլաևի, գավառապետ Ֆրեյլիխի և ենթագնդապետ Վեվերնի գլխավորությամբ գործող կաղակային զորամասերի կատարած բազմաթիվ վայրագություններ և քստմնելի դեպքերի նկարագրություններով լի հեռագրեր[22]։

Երկրորդ դուման ևս չարդարացրեց Նիկոլայ II-ի հույսերը, ուստի նա որոշեց ցրել նաև այս Դուման։ 1907 թ. հունիսի 1-ին կառավարության ղեկավար Ստոլիպինը Դումայի փակ նիստում պահանջեց անմիջապես արտաքսել սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի բոլոր 65 անդամներին և ստահոդ մեղադրանքներ ներկայացնելով «պետական դավաճանության» մեջ, նրանց բանտարկել տվեց։ 1907 թ. հունիսի 3-ին օրենք հրապարակվեց Պետական դուման ցրելու և Երրորդ դուման հրավիրելու մասին։ Այդ նույն օրենքով բանվորների և գյուղացիների ընտրական իրավունքները խիստ սահմանափակվեցին։ Դրանով իսկ Ստոլիպինը պետական հեղաշրջում կատարեց՝ խախտելով Դումայի օրենսդիր իրավունքը, օրենք հրապարակեց առանց նրա գիտության։ 1907 թ. հունիսերեքյան հեղաշրջումով ավարտվեց Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը։

Անցյալի տասնամյակներից ավանդաբար մեզ հասած մեղադրանքը, թե հեղափոխության պարտության մեջ մեղավոր են նաև մենշևիկները, վերանայման կարիք ունի։ Ըստ երևույթին բոլշևիկների՝ փոխզիջումների չդիմելու և հաղթանակի հասնելու համար բոլոր միջոցներին, այդ թվում և զինված ապստամբությանը դիմելու մարտավարությունն իրեն չէր արդարացնում։ Հոկտեմբերյան մանիֆեստի տված արտոնությունները խելացի օգտագործելու դեպքում և՛ արյունահեղություն քիչ կլիներ, և՛ ռեակցիան չէր հաղթանակի։ Հեղափոխության զարգացման սոցիալ-դեմոկրատական-պլեխանովյան ծրագիրը, թերևս, ավելի ճիշտ էր։ Այս կապակցությամբ տեղին է վերհիշել Գ. Պլեխանովի հայտնի գնահատականը 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբությանը. «Պետք չէր դիմել զինված ապստամբության», ի հեճուկս որի, Վ. Լենինը հայտարարեց. «Ընդհակառակը, պետք էր ավելի կազմակերպված և ավելի վճռական դիմել զինված ապստամբության»։ Այժմ 90-ամյա հեռավորությունից դիտելով ու քննարկելով անցյալը, պետք է արձանագրել, որ Ռուսաստանի զարգացման պլեխանովյան դիրքորոշումն ավելի իրատեսական էր և հեռանկարային։ Արժե խորհել պատմության դասերի մասին։

Ընտրական նոր օրենքով Երրորդ դումայում բավական ընդլայնվեցին կալվածատերերի և բուրժուազիայի իրավունքները, է՛լ ավելի վատթարացավ ազգային ծայրամասերի վիճակը։ Միջին Ասիան բոլորովին զրկվեց ընտրական իրավունքից, իսկ Լեհաստանի և Կովկասի պատգամավորների թիվը կրճատվեց մոտ երեք անգամ։ Բնութագրելով ստեղծված վիճակը, Վ. Վորովսկին գրել է. «Ծայրամասերը մասնակցում էին խորհրդակցական ձայնով՝ դառնալով ազգագրական գեղեցիկ դեկորացիա՝ սեհարյուրյակային կալվածատիրական մեծամասնությանը ցանկալի Դումայի համար»[23]։

1907 թ. աշնանը տեղի ունեցան Երրորդ Դումայի ընտրությունները։ Հունիսերեքյան ընտրական օրենքը խիստ սահմանափակեց նաև հայ ժողովրդի իրավունքները։ Անդրկովկասում կազմվեցին նոր ընտրական օկրուգներ, որոնք պետք է պատգամավորներ առաջադրեին՝ երկրամասի ռուս բնակչությունից, Թիֆլիսի նահանգից, Քութայիսի նահանգից, Կարսի, Բաթումի մարզերից և Սուխումի օկրուգից՝ մեկական, Բաքվի, Ելիզավետպոլի և Երե-

---

22 Государственная Дума, второй созыв, стенографические отчеты, т. II, СПб, 1907, с. 936—939, 1079—1081.

23 В. В. Воровский, Избранные произведения о первой русской революции, М., 1955, с. 243.

վանի նահանգներից՝ երկուական թեկնածուներ, ընդ որում, գրանցից մեկը անպայման պետք է լիներ թաթար, մյուսը՝ հայ և մնացած ազգերից։ Այսպիսով, Հայաստանին առանձին օկրուգ չէր տրվում, և այնտեղից թեկնածություն պետք է առաջադրվեր երեք նահանգների ընդհանուր օկրուգում՝ մնացած բնակչության (վրացի, հրեա և այլն) հետ միասին։ Ընտրվողը պետք է անպայման տիրապետեր ռուսաց լեզվին։ Ընդհանուր առմամբ, Անդրկովկասյան պատգամավորների թիվը Երկրորդ դումայի ներկայացուցիչների համեմատ կրճատվեց 14 տեղով։ Խտրական քաղաքականության արտահայտություններից էր նաև այն, որ հայ ընտրողները և Բաքվի բանվորները պետք է առաջադրեին մեկ պատգամավոր։ Ընտրությունները բազմաստիճան էին, ընդ որում, գյուղացիների համար՝ քառաստիճան, բանվորների համար՝ եռաստիճան։ Սկսված ռեակցիայի պայմաններում քաղաքական ապատիան համակել էր լայն զանգվածներին, ուստի նրանց զգալի մասը անտարբեր էր ընտրությունների արդյունքների նկատմամբ։

Այս անգամ ընտրությունները կայանալու էին Ելիզավետպոլում, և հոկտեմբերի 14-ին ընտրական բավականին սուր պայքարից հետո անցավ Հ. Սաղաթելյանը, որը պատգամավոր էր նաև նախորդ Դումայում։ Հայ պատգամավորը, ղեկավարվելով քաղաքական դաշնակիցներ ունենալու անհրաժեշտությամբ, Անդրկովկասյան հարցերը արծարծելու համար վերահաստատում է իր կապերը Դումայի կենտրոնի ներկայացուցիչների, այդ թվում օկտյաբրիստների պարագլուխ Ս. Դուչկովի հետ, իսկ ազգային հարցում հիմնական դաշնակից շարունակում էին համարվել տրուդովիկները։

Հեղափոխության նոր վերելքի տարիներին, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում ու Հայաստանում հակոտնյա կուսակցությունների ու կազմակերպությունների բախումն արտահայտվում էր Պետական դումայի ընտրությունների շուրջ։

Երրորդ դումայի անփառունակ գործունեությունը լավ բան չէր խոստանում նաև հաջորդ՝ Չորրորդ դումային։ Արտաքին տպավորությամբ ընտրությունների հաղթանակ էին տանելու աջերը և բացահայտ միապետականները։ Սակայն երկիրը թևակոխում էր հեղափոխական նոր փոթորիկների ժամանակաշրջանը և ծայր առած բանվորական շարժումներն ու գյուղացիական հուզումները իրենց կնիքն էին դնում հասարակական-քաղաքական կյանքի, այդ թվում և Դումայի ընտրությունների ընթացքի վրա։

1912 թ. օգոստոսին հրամանագիր հրապարակվեց Երրորդ գուման արձակելու և նոր Դումա հրավիրելու մասին։ Սեպտեմբերին ամբողջ երկրում սկսվեցին պատվիրակների ընտրությունները, որոնք առաջադրելու էին Դումայի պատգամավորները։

Հոկտեմբերի 20-ին Ելիզավետպոլ քաղաքում տեղի ունեցան պատգամավորի ընտրությունները, որոնք հաղթանակ բերեցին նշանավոր իրավաբան Միքայել Պապաջանյանին, ընդդեմ դաշնակցության թեկնածուներ Հ. Սաղաթելյանի և Տ. Բեկզադյանի։ Պապաջանյանի ընտրությունը լիբերալների հաղթանակն էր։

Ինչպես հայտնի է, Դումայի բացումը տեղի ունեցավ 1912 թ. նոյեմբերի 15-ին՝ դեռևս մեկ շաբաթ առաջ սկսված բողոքի հուժկու գործադուլների ուղեկցությամբ՝ ընդդեմ Սեծովյան նավատորմի ապստամբ նավաստիների նկատմամբ որոշված մահապատժի։

Պետական դումայում Պապաջանյանը հարում է կադետներին և սրանց համակիր խմբակցություններին, սերտ հարաբերություններ ստեղծելով նրա ղեկավարների՝ Պ. Միլյուկովի, Ա. Շինգարյովի, Վ. Մակլակովի, Ֆ. Ռոդիչևի, Մ. Աճեմյանի և այլոց հետ։ 1913 թ. նոյեմբերի 26-ի նիստում նա հանդես է գալիս Անդրկովկասում անբերրիությունից տուժած բնակչությանը օգնություն ցույց տալու հարցի կապակցությամբ և ընդգծում, որ կառավարական նպաստամատույց հանձնաժողովի տրամադրած նույնիսկ սուղ միջոցները չեն հասնում բնակչությանը։ Մ. Պապաջանյանը ուշադրություն է հրավիրում այն բնորոշ երևույթի վրա, որ գյուղացիությունը՝ հատկապես լեռնային և նախալեռ-

նային շրջանների սովյալ հայ և մահմեդական բնակչությունը, հրաժարվում է դրամական փոխառությունից, ըմբռնելով, որ հետագայում դրա բռնագանձումը իրենց աղքատացած տնտեսությունները վերջնականապես քայքայման կհասցնի[24]։

1913 թ. հունիսի 6-ի նիստում, երբ քննարկվում էր արտաքին գործերի նախարարության բյուջեն, Պ. Միլյուկովը, անդրադառնալով Բալկանյան ճգնաժամի կապակցությամբ վերաբացված Հայկական հարցին և մասնավորապես Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու խնդրին, կառավարությանը կոչ է անում զբաղվել այդ հարցով։ Թուրքիայում կիրառվող ներքին քաղաքականության և արևմտահայերի ապագա ճակատագրի հարցին էր նվիրված Մ. Պապաջանյանի ելույթը։ Նա շեշտեց Ռուսաստանի դերը, որպես «Արևելքի քրիստոնյաների դարավոր պաշտպանի»՝ չմոռանալով շնորհակալական խոսք ասել նաև կոմս Վ. Բոբրինսկուն՝ Չորրորդ դումայում աջերի պատգամավորներից մեկին, վերջինիս այն լրջմիտ հայտարարության համար, թե արևելահայերի մեջ հակառուսական, անջատողական ձգտումներ չկան։ Խոսելով Արևմտյան Հայաստանում կիրառվող ջարդերի և հայահալած քաղաքականության մասին, Մ. Պապաջանյանը հակադրվեց մենշևիկ Ա. Չխենկելուն, որը պահանջում էր ձեռնպահ մնալ Թուրքիայում հայերի վիճակը լավացնելու համար բարենորոգումներ անցկացնելուց։ Բազմաթիվ փաստեր բերելով, նա ցույց է տալիս, որ արևմտահայերը Թուրքիայից քաղաքականորեն անջատվելու մտադրություն չունեն, այլ պահանջում են միմիայն կյանքի, գույքի, պատվի և մշակութային զարգացման ապահովություն։ Մ. Պապաջանյանի այս ելույթը լայն արձագանք է գտնում ռուսական առաջադիմական մամուլում։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1914 թ. մայիսի 10-ին, երբ կրկին Դումայում հարց է բարձրացվում Թուրքիայի մասին, դարձյալ հանդես է գալիս Ա. Չիխենկելին և առարկում Արևմտյան Հայաստանի ինքնավարությանը, «Հայկական Մակեդոնիտ» ստեղծելու ծրագրերին։ Նույնպիսի տրամադրություններ արտահայտեց նաև ամենաաջ պատգամավոր Ն. Մարկով 2-րդը՝ հայտարարելով. «Ես հարցնում եմ, ի՞նչ կարիք ունի Ռուսաստանը Կովկասի սահմաններին կից ստեղծելու Հայաստան, որը բնականորեն կձգտի իրեն միացնել Ռուսական Հայաստանը»[25]։

Թեպետ Թուրքիայի կազմում հայկական ինքնավարություն ստեղծելու խնդիրը տակավին թեական էր, քանի որ համաշխարհային պատերազմի բռնկումը ամիսների հարց էր, բայց, այնուամենայնիվ, կատաղի դիմադրություն էր առաջացնում ռուսական ազնվականատիրական, միապետական ազգայնական շրջանակներում, որոնց ձայնակցում էր նաև վրաց պատգամավորների մի մասը, այդ թվում և մենշևիկները։ Նրանք, չնայած իրենց սոցիալիստական պիտակին, զգալի չափով ազգայնականներ էին և Անդրկովկասում հայության առաջընթացը արգելակելու և միաժամանակ ադրբեջանական ազգայնականների հակահայկական դիրքորոշումը պաշտպանելու կողմնակիցներ։ Այդ համերաշխությունը ցայտուն դրսևորվեց առաջին աշխարհամարտի ավարտից հետո, անդրկովկասյան անկախ հանրապետությունների գոյության ժամանակաշրջանում։

Մ. Պապաջանյանը դումայական և արտադումայական ավելի մեծ գործունեություն ծավալեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Հայկական հարցը թևակոխեց իր պատմության ամենամռայլ ժամանակաշրջանը, երբ հայ ժողովրդի նկատմամբ կիրառվեց պատմության մեջ առաջին ցեղասպանությունը[26]։

---

24 Տե՛ս Стенографический отчет Государственной Думы, четвертый созыв, сессия вторая, СПб, 1914, с. 1403—1404.

25 Տե՛ս ՀՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 713, թ. 12—14։

26 Տե՛ս Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов, под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966, с. 246—265.

Մ. Պապաջանյանը մեծ ազդանպաստ գործունեություն ծավալեց նաև Առաջին հանրապետության տարիներին։

Պետք է նկատել, որ Միքայել Պապաջանյանը Դումաների պատմության մեջ հայ պատգամավորներից ամենանշանավորն էր և ռուսական իշխանությունների կողմից ամենահարգվածը։ Նա հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման կողմնակիցն էր և իր գործունեությամբ ձգտում էր ապացուցել ռուսական պետական այրերին, որ Հայաստանը և հայ ժողովուրդը ընդհանրապես հանդիսանում են Ռուսաստանի ռազմավարական դաշնակիցը Անդրկովկասում և Փոքր Ասիայում։

Այսպիսով, Պետական դումաների հայ պատգամավորները, անկախ կուսակցական պատկանելությունից, անշահախնդիր կերպով ծառայել են հարազատ ժողովրդին և ցուցաբերելով քաղաքական լայնախոհություն, հայկական իրականության հարցերին տվել են համառուսաստանյան հնչեղություն։

ГОСУДАРСТВЕННАЯ ДУМА И ВОПРОСЫ ВОСТОЧНОАРМЯНСКОЙ ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ

Д. А. МУРАДЯН

Резюме

Первая русская революция имела исключительное значение для всех народов, населяющих Россию. Завоеванием освободительного движения был созыв Государственной думы—законодательного парламента—показателя становления страны на путь конституционной монархии.

Во всех четырех Государственных думах активно участвовали депутаты-армяне из Закавказья и России. Выражая интересы и настроение армянского народа, они выступали по экономическим, политическим, национальным вопросам. В то же время, проявляя широту политических взглядов, они солидаризовались с российскими депутатами—демократами и либералами.